ԽՈՍՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Մայր Հայրենիքում շուքով և խանդավառ մթնոլորտում նշվեց Բեյրութում հրատարակվող «Շիրակ» գրական-գեղարվեստական ամսագրի 30-ամյակը: «Շիրակ» ամսագիրը դժվարությունների բովով ու հաջողությունների խինդով դարձավ բեյրութահայ գրական-գեղարվեստական մտքի անդաստանը, բայց և իր շուրջ հավաքեց և իր գոյությամբ ոգևորեց Սփյուռքի գրեթե բոլոր գաղութներում գտնվող հայ մտավորականությունը, ուղի հարթեց սկսնակների համար և դասականների համար դարձավ հաստատուն հիմք: Փառաբանեց հայ մշակույթի նվաճումները, շեփորեց հայ ժողովրդի վերածնունդը, մանավանդ խաղաղ ստեղծագործական կյանքը Մայր Հայրենիքում, ձայն բարձրացրեց հայ ժողովրդի արդար դատի լուծման ի խնդիր:

Հանդիսություններին մասնակցելու համար Մայր Հայրենիք ժամանած «Շիրակ» ամսագրի խմբագիր տիկար Օննիկ Սարգիսյանը, գրող և հասարակական գործիչներ տիարք Հայկ Նազգաշյանն ու Արամ Սեփեթճյանը հանդիպում ունեցան նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ:

Այս առթիվ Նորին Սրբությունը հետևյալ Հայրապետական խոսքն ուղղեց Լիբանանի հայության.

Սիրով կողջունենք Ձեր ժամանումը Մայր Հայրենիք ձեր հրատարակած «Շիրակ» ամսագրի հրատարակության 30-ամյակի առթիվ:

Պեյրութի «Շիրակ»-ը իր ուրույն և պատվավոր տեղը ունի Սփյուռքի տարածքի վրա լույս տեսնող գրական-գեղարվեստական հրատարակություններու շարքին, որ գնահատված է ոչ միայն արտասահմանի մեջ, այլ նաև մեր մայր երկրի մտավորականության կողմե:

Այսօր Սուրբ Էջմիածին Ձեր այցելության առթիվ, հաճելի է Մեզի ողջունել և շնորհավորել Ձեր ամսագրի երեսուն տարիներու վաստակը և մաղթել Ձեզ և բոլոր ձեր աշխատակիցներուն հարատևության ոգի, մշտանորոգ ազգահաստատ ներշնչանքներ, շարունակելու Ձեր առաքելությունը:

Ամեն հայ լեզվով հրատարակություն ճառագայթումն է հայ ոգիին ու հանճարին աշխարհի տարածքի վրա:

Մեր օրհնությունը «Շիրակ»-ի խմբագրության, աշխատակիցներուն և բոլոր ընթերցողներուն:

Պարտք կզգանք օգտագործել այս առիթը Ձեր միջոցավ Աստուծո օրհնությունը առաքելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն սուրբգրական Լիբանանի համայն հայության Մեր սրտեն բխած ամենաբարի մաղթանքներով հանդերձ:

Ինչպես այլ առիթներով արտահայտած ենք, Լիբանանի մեր հավատավոր ժողովուրդը իր աղոթքի Տուներով, իր կրթական հաստատություններով, իր մշակութային և բարեսիրական ազգային կազմակերպություններով հարազատ, անբաժանելի մասն է մեր մայր երկրի հայության, նույն կրոնական հավատքով, նույն առաքելական եկեղեցիով, նույն ավանդություններով, նույն մայրենի լեզվով և նույն ոգևորությամբ:

Թող Աստված իր անբավ ողորմությամբ իր բարի ձեռքը տարածե՝ այսօր տառապող լիբանանյան հայրենիքի վրա, սեր և խաղաղություն իջեցնե բոլոր համայնքներուն վրա, մահմեդական թե քրիստոնյա, որպեսզի միասնական ճիգերով վերահաստատվի ներքին համերաշխությունը և շինարար գործակցությունը բոլորի միջև և Լիբանանը, Միջերկրականի այս մարգարիտը, վերագտնե իր երբեմնի վճիտ պայծառությունը և միաջզգային բարի համբավը:

Եվ այս պայմաններուն մեջ, նաև հայոց եկեղեցական համայնքը, եղբայրացած բոլոր մյուս աստվածասեր համայնքներուն հետ, միասիրտ ու միակամ իր նպաստը բերե լիբանանյան հայրենիքի վերելքին, ծաղկումին և հեղինակության:

Մենք իբրև առաջին սպասավորը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվո, պատվեր կուտանք մեր հոգևոր զավակներուն ի Լիբանան, որ Քրիստոսի սիրով միաբանած, խաղաղարար ոգիով՝ մնան հավատարիմ ու շինարար քաղաքացիները լիբանանյան հայրենիքին, մնան ամուր կառչած զիրենք սնուցանող Լիբանանի մայր հողին, համբերեն անցավոր նեղություններուն, հոգիով եռան և հույսով խնդան, տեսիլքովը գալիք լուսաբացին:

Մեր իղձն է նաև, որ Տերը միշտ շեն ու լուսառատ պահպանե Ձեր եկեղեցիները բոլոր, հովանիին ներքև Կիլիկյան կաթողիկոսական Աթոռին, մշտապես հոգեպարար իրագործումներով:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկրպագուս անուանդ քում սրբոյ պահեա ի խաղաղութեան»: Ամեն:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

4 Հունիս 1987 թ.

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը նույնպես շնորհավորում է «Շիրակ» ամսագրի երեսնամյակը՝ տոկուն եռանդ, անսպառ կորով և առատ հունձք մաղթելով նվիրյալ աշխատակիցներին:

ԹՂԹԱԿԻՑ